

Պ. Խօջայեանց Յովշաննիսի հետեւալ զրութիւնը հրատարակելով՝ որ կը պարունակէ, այսասանի հետաքրքրական առակենքներէն բաւական հաւաքում, յորում գտնուած չամ. բառից թարգմանութիւնքն էս յաւելլով՝ յաջորդ ամսագրոց մէջ Գիշնի վերնագրով յօդուածն էս կը հաղորդեմք մեր ընթերցողաց:

Խ. Հ. Ա. Բ. Ե. Ա. Ե. Ա. Ա. Ա. Ե. Ա. Ա.

Պ. Մ. Մ. Միանսարեանցի Երգարանի պիտանաւորութիւնը ամենայն ուղղասկը անձնագնարից, որոնց մտաւորական հայեացքը նորա վրայ ընկած են, գոյուած է անկեղծօրէն, նա պարունակում է իւր մէջ ամենայն կարգի գրուածքները, որոնք մարդը կարդալով՝ ժամ առ ժամ իոթը կաւելանայ, սիրով կ'զուարձանայ, և օգտաւէտ առարկաներից նիւթ կ'քաղէ. պարզն ասեմ՝ նա իմ միանութեան ընկերն է, նա իմ պարապութեան զուարձութիւնն է, մանաւանդ՝ երբ սակաւ ինչ ձանձրանալից զնիք՝ բաց եմ անում զուարձալի առածները, որոնք գործ են ածվում միշտ խօսակցութեան մէջ իրրե մի անհելքելի ապացոյց ներկայ առարկաների, կամ իրը շուտով հասկացնելու նշանակ. կան այնպիսիքն ել նրանցից, որոնք գործ են ածվում առ հասարակ խօսակցութեան մէջ իրրե ստորապութեան կամ բացասութեան մի գաղտնիք ներկայ առարկայումը, զօր. "Ասուած զիտէ", "ապրինք էլի՞", "թէ սաղ մնացի՞", "օրը զայ բարին հնոր", և լու, և լու..

Այդպիսի առածներից յաճախ դորժածական են այս տեղ մեղանում, և տեսանելով՝ որ շատերը մեր զիտցածներից չկան զրուած այն Երգարանում, օգտաւէտ համարեցի պատրաստել նըրանք, (չհայելով՝ թէ զտանվում են նրանցից քանիմներումը օտարազգի բառեր, որոնք զիտաւորապէս զարդ են շարագրութեանը, և ոչ աւելլորդ կամ անտեղի) և ահա այս գրութեանս հետ պատիւ ունիմ խոնարհարար առաջի առնել Խըմբագրութեանդ Ալարտու ամսագրոց, որպէս զի՞եթէ կ'բաղդաւորուին նորա՝ 2եր բարեհաճութեամբ՝ արձանայնէք ի տիար:

Քովշաննէս Խօջայեանց.

ՏԱՐԱԿԱՆՆԵՐԸ ՎՐԱԿԱՆՆԵՐԸ

Առակը անխոտելի է:

Ալին 1) կինք լալում, վալին 2) եկաւ կարպետով:
Ակաս մակաս էկ էր պակաս:
Ախոռումը քնել, սուլթան Մուրատին երազումն է տեսնում:

Անձը բօղազիցն 5) է յառաջ գնում:

Աղուէսը բազարումը 4) ի՞նչ բան ունի:

Աղուէսի փախուստը մինչև քիւբրձու 5) թու-

քանն 6) է:

Անամօթը չի պատկառում՝ թէ հին շրեր էլ հաղին, պէտք է ծառնին, հպարտանայ:

Այնքան չեղար ինձի պէս, ինձ էլ արիր քեզի պէս:
Այնպէս թուբբացար, որ հօրդ խաչն էլ մտահան արիր:

Ազիկը պսակուել ուղելիս՝ տան կճռւճներն է կոտրուում. տղայն ուղելիս՝ օտարութիւն է փախչում:

Ամենը իրան տունը, ոսկի սնտուկը մեր տունը:

Ամեն մարդ իրան գրածը լաւ կ'կարգայ:

Անունը կայ՝ ինքը չ'կայ:

Անժամանակ խօսող խօրոգի 7) զլուխը կտրում են:

Անունդ զառ հանէ, այլոց ոչխարը կեր:

Անցանք գարձանք՝ մեղայ նստուծց:

Անօթի հաւը երազումը ցորեան է տեսնում:

Աշխարհի մալը 8) աշխարհում կ'մնայ:

Աշխարհի վայելչութիւնը մի ուամիկ է վայելչում:
արբայքը իրանց գահերում միայն մի լոկ պատերազմում են:

Աշխարհի բը իմաստուն Թօղումնին չէ մնացեր:

Աղջկայ տունը գափ ու զուռնայ 9). տղի տունը ոչ ինչ չ'կայ:

Ամենի զիինին մի սանտր է յարմարցուցել:

Այլոց համար լաց լինողը իրա աշքերից կ'զրկուի:

Աչքը տեսածիցն է վախննում:

Ասպիրինք էլի:

Աստուած զիտէ:

Աստուած վատը կ'ճանաչէ:

Առատիցը մէկ, ագահիցը երկուս են գնում:

Ասպի մեռած մօքբուրդ:

Ասպանքը մոխաննաթ 10) չէ, տերն է մուխաննաթ:

Ասողին լսող պէտք է:

(1) Յատուկ անուն է Տաճկայ, և կնշանակէ մէջ, բայցը Լը

(2) Գայուսանի անուն է Նահանչապէտը Նը

(3) Կահիբէ:

(4) Աւաճաւանոց, Հուկայ:

(5) Մուշտումիւդունք, Բաւշտումիւդունք:

(6) Տիւլեն, Խոնուր:

(7) Արլոր, Ռուզուր:

(8) Ինչու, ապրանու, առաջանու:

(9) Փող:

(10) Անհնիսուր, աղիբուր: